ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա· ՏՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՑ ԹԻՒ 4 1861 ՀՈԿՏԵՄԲԵՐ. 15.

# ՔԱՅՐԻԼ

ԽՕՍՔ

Գ. Չափրաստճեան





# ԾԱՓԱԿ

Ցոլեցիեանց 'ի շնորհաց տիրաւոր կոմսի յարգանօք

երկնից

ԿԴԱՅՑԱԿ ՄԵԼԻՔԵԱՆ






1. Հովէ աշխարհի ամբարձայ յանհուն ծով
անսահման միշտ էիս իմ որդւոյս Աստուծով

Հիացումն անպատում զիս ունի հրճուելով
վիճակէ 'ի վիճակ ծիր. անչափ չափելով

Անդամնոր անցաւոր այլայլակ էր ալիք
աստանօր աստաւոր անփոփոխ միշտ բարիք

Յեղյեղուկ անհանգիստ որբս մարդոյ անդ տարտամ
այստ հանգչի միւր հաստից յանկորուստ գանձ փարթամ

Բնական լոյսն անձառ ընդ քօղով անդ նսեմ
բերբարձի շող շողէ յանդիման աստ փոեմ

Մաքրութիւն հոգեղէն անդ երեկ ընդ աշօտ
որբափայլ ճաճանչեղ աստ առնէ առաւօտ

Կուրօրէն տեսուի խարխափէ 'ի մարմնի
յանեբէկ միջօրեայ լոյս շրջի աստ հոգի

Բարունեաց խաւարից հանձարոյ այն կածիկ
թող տեսցէ զայս ըղձուն ամենայն ընկերիւ

Հ. …նակեան…

## ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Շարունակութիւն թիւ 1.2.3.

Այս ալ պէտք է գիտնալ որ՝ ամբողջ ժամանակ բաժնիս տասըն և վեց բայ է, և չորս կէս (զարպ) կայ իր մէջը, և մէկ կէս (զարպն) ալ $\frac{1}{4}$ ժամանակ (այսինքն) չորս բայ է ։ — Ձայն մը խօսքիպէս գրի առնելու և կարդալու համար՝ կերպ կերպ նշաններ կը գործածուին որ ասոնք են (0) սուղ տասն և վեց բայ. (⚬) զոյգ կէս ութ բայ. (•) կէս չորս բայ. (,,) երկսոսր մէկ բայ. (,) սոսր երկու բայ. (♭) թաւանշան երեք բայ. (♪) կիսաթաւ բայ ու կէս. (ↄ) ծունկ կէս բայ. (ↄↄ) ծկներ. քառորդ բայ. (⌒) հաւասար $\frac{1}{4}$ ի մէջ, և առանց այս նշաններով ձայն մը չեմք կրնար կանոնաւոր գրել և կարդալ, այլ՝ մինակ ամէն մէկ ձայնին անունը կրնամք հանել ։

Մէկ գիր մը կամ մէկ ձայն մը տասն և վեց բայ առնելու համար սուղը կը գործածուի, որուն կսէինք ամբողջ ժամանակ ։

Մէկ ձայն մը ութը բայ առնելու համար՝ զոյգ կէսը կը գործածուի, որուն կսէինք $\frac{2}{4}$ ժամանակ ։ — Նմանապէս մէկ ձայն մը չորս բայ առնելու համար (•) կը գործածուի որուն կսէինք $\frac{1}{4}$ ժամանակ, և բոլոր նօթայի դրութիւնները $\frac{1}{4}$ ժամանակի վրայ կերդան (այսինքն չորս բայի տակ կիյնան. ըսել է որ՝ հանած կամ լաւծ ձայներնիս չորս բայի զատելով՝ նախ այն չորս բային տակ եղող ձայները պէտք գրեմք յետոյ միւս ձայները և այսպէս պէտք շարունակեմք ։

Բայց կան այնպէս դրութիւններ, որ այս կանոնէն կը խոտորին և անոնք ալ վերջը պէտք տեսնամք ։

Երկու գիր $\frac{1}{4}$ ժամանակ (այսինքն) չորս բայ ըլլալու համար սոսրը կը գործածուի, և իւր զօրութիւնը քովի գրին ալ կուտէ, ինչպէս ։



Չորս գիր $\frac{1}{4}$ ժամանակ ըլլալու համար երկսոսրը կը գործածուի ինչպէս ։



Երկու գիր $\frac{1}{4}$ ժամանակ ըլլալու համար թաւանշանը կը գործածուի բայց զօրութիւնը մինակ մէկ գիրի կուտէ, ըսել է ՙ՚ գիրը երեք բայ ՙ՚ գիրը մէկ բայ ինչպէս ։



Շարունակելի ․․

Հ․ Գ․ Ջերչեան ․

---

## ՀԱՄԱՌՕՏ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Շարունակութիւն թիւ 1.2.3.

Ութերորդ տօն առաջինէն թէպէտ բարձր է, բայց միանդամայն անոր նման ձայն մը ունենալուն համար նոյն անունը կառնէ, և ութերորդէն մէկ աստիճան վեր եղող ձայնը պէտք կոչուի (ռէ) որովհետև ճիշտ երկրորդ ռէյին նման է բայց ութնեակ մը բարձր և ամէն ուրիշ ձայները ասոր պէս են ։

Վառորդ ձայներուն վեր ելլելուն կանոնաւոր կարգը կըլլայ տօ, ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի, տօ, և իջնալուն կարգը տօ, սի, լա, սօլ, ֆա, մի, ռէ, տօ

Այս ձայներուն մէջ ձայներ ալ կան որ կիսաձայն կ՚ըսուին, և այս կիսաձայները ճանչնալու համար երկու նշան կայ որ ձայներուն առեւ կը դրուին ինչպէս (#) այս նշանին կ՚ըսուի տիեզիս. և որ ձայնին քովը տեսնեմք կէս ձայն վեր կը նշանակէ ։ (♭) այս նշանին ալ կ՚ըսուի պէմոլ կէս ձայն վար կը նշանակէ ։ բայց այս ալ գիտնալ պէտք է որ ութնեակին ութը ձայներուն մէջ եղած ամէն միջոց հաւասար չէ, այլ անոնցմէ մինակ հինգը մեծէն և երկուքրանից կիսուն չափ որոնց կրնամք ըսել ամբողջ աստիճան՝ և կէս աստիճան, կէս աստիճաններն են ընականապէս տօ, ֆա, միւս մնացած ամէն միջոցները ամբողջ աստիճան են ինչպէս. սի էն տօ կէս միջոց ունի և մի էն ֆա կէս միջոց ունի ։

Օրինակ միջոց աստիճաններու.




Երկու ձայն կայ որ միջոց չունենալնուն համար տիեզ չի գործածուիր մի, սի, երկու ձայն ալ կայ որ պէմոլ չի գործածուիր ֆա տօ ․․

Օրինակ կիսաձայներուն տիեզ և պէմոլի նշաններով ։



Երաժշտական դրութեանց մէջ երկու կերպ բանալի տեսանք ասկէ գործածականներ որոնց մէկուն քլէֆ սօլ և միւսին քլէֆ ֆա կըսենք, քլէֆ սօլը Ⅱ գծին վրայ կը դրուի. իսկ քլէֆ ֆան Ⅳ գծին վրայ կը դրուի և նոյն գծին անունն ալ ֆա կըսուի

Օրինակներ







Շարունակելի ․․

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՔ

Գ․ Յ․ Էքսերճեան } Դասատուք Երաժշտութեան Աղգային դպրոցաց

Ն․ Մ․ Թաշճեան }